ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (I—III դդ.)

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Անտիկ դարաշրջանում առևտրական ճանապարհների բախտը որոշվում էր մասնավորապես երկու տերությունների՝ Հռոմի և Պարթևական Իրանի, ինչպես և նրանցից դանդաղ աստիճանի կախվածություն ունեցող կամ էլ անկախ երկրների քաղաքական իրադրություններով, որոնց հետևանքով մասնակիորեն փոխվում էին նաև առևտրական ուղիները։ Այս առումով՝ Հայաստանն ու Անդրկովկասի երկրները որոշակի նշանակություն էին ստանում։ Հատկապես Հայաստանի աշխարհագրական նպաստավոր դիրքը, հռոմեա-արևելյան առևտրական մշտական կապերի հաստատումից տակավին վեց դար առաջ, թույլ էր տալիս, որ համաշխարհային առևտրի մեջ նա խաղար զգալի դեր։ Բավական է հիշել, որ Հայաստանի հարավ-արևմտյան գավառներով էր անցնում աքեմենյան արքայական ուղու մի հատվածը, որը մեծապես խթանում էր Ծոփքի՝ Պատմական Հայաստանի այս կարևորագույն բնաշխարհի, և Փոքր Հայքի մշակութային ու անտեսական վերելքը (Հերոդոտոս, V, 52), սակայն վերջիններիս առանձնահատուկ տնտեսական վիճակն ու շահերը քաղաքականապես նրանց վանում էին Մեծ Հայքից։

Եթե Հայաստանի արևմտյան ու հարավային գավառները հակվում էին Միջագետքից դեպի Փոքր Ասիա տանող առևտրական ուղիները, ապա երկրի արևելյան շրջանները վերին աստիճանի կարևոր դեր էին կատարում Իրանից դեպի Սև ծովի հյուսիսային ափերն ընթացող առևտրում։ Այս երկու կենսատատ երակների միացման առաջին լուրջ փորձը կատարվեց Արտաշեսյանների օրոք, երբ երկրի հարավում հիմնվեց Տիգրանակերտ քաղաքամայրը (Պլուտարքոս, Լուկուլ., XXVI։ Ապպիանոս, Միհրդատ., 86) և գցվեց Տիգրանակերտ—Արտաշատ մայրուղին։ Ջեռնարկումներից առաջինով Տիգրան II-ը շահեկանորեն միացրեց Հյուսիսային Միջագետքի ուղիները Մելիտենեի հետ, իսկ երկրորդ քայլով Էկբատան—Արտաշատ—Ֆազիս մայրուղին կապեց արևմտյան միջազգային առևտրի ճանապարհների հետ։ Տիգրանակերտ—Արտաշատ կարևոր ճանապարհն իր դերը պահպանում էր ողջ անտիկ շրջանում. Արտաշատը հիշատակվում է նաև հետագայում, Հուստինիանոսի 408—409 թթ. էդիկտում։

Հավանաբար, արդեն Օգոստոս Օկտավիանոսի դարաշրջանում Անդրկովկասը և, մասնավորապես, Հայաստանը, նշանակալից երկրամասեր էին Արևելքի ու Հռոմի միջև ընթացող առևտրի համար։ Դրա նախադրյալներն արդեն կային Սելևկյանների օրոք, երբ Հայաստանը բազմաթիվ թելերով կապվեց Սիրիայի ու Միջագետքի հետ, իսկ առավել ևս՝ մ. թ. ա. I դ., որի վկայությունն են ինչպես Հայաստանում ու Անդրկովկասում հայտնաբերված սիրիական դրամները, այնպես էլ Արտաշեսյան դրամները Սիրիայում[1], Միջա-

---

[1] Х. А. Мушегян, О распространении эллинистических монет в Армении («Эйрене», т. I, Ереван, 1978, с. 193); Նույնի՝ К истории денежного обращения античной Армении («Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока», М., 1978, с. 137).

գետքում[2], Իրանում[3], Կոլխիդայում[4] և Աղվանքում[5]։ Մ. թ. I դ. Հայաստանով, Իբերիայի ծայր արևմտյան հատվածով և Կոլխիդայով էր անցնում հյուսիսային մայրուղին։ Սրա արձագանքն է Ստրաբոնի հիշատակությունը առրսների մասին, որոնք զբաղվում էին հայերից ու մարերից փոխանակությամբ ստացված հնդկական ու բաբելոնյան ապրանքների քարավանային առևտրով (Ստրաբոն, XI, 5 (8)։ Նշանակալից էր նաև Հայաստանի առևտուրն իր արևմտյան հարևանների հետ՝ Սատալայի (Սատաղ) ու Լիկոս (Գայլ) գետի վերին հոսանքի վրայով։ Դարձյալ նույն պատմիչի վկայությամբ՝ «Կոմանան ունի ստվար բնակչություն և նշանակալից առևտրական կենտրոն է Հայաստանի վաճառականների համար։ (Տարին երկու անգամ—Հ. Հ.) Աստվածուհուն ի ցույց հանելու ժամանակ ժողովուրդը՝ տղամարդկանց հետ նաև կանայք, քաղաքներից ու երկրամասից հավաքվում է այստեղ՝ կատարելու տոնը» (Ստրաբոն, XII, 3 (36)։

Հայաստանի ու Անդրկովկասի երկրների տարածքում ծավալված աշխույժ առևտրի գոյության ապացույցը ոչ միայն գրավոր աղբյուրների ընձեռած ժլատ, բայց որոշակի տեղեկություններն են, այլև այդ երկրների պատմական տարածքներում հայտնաբերված դրամները։ Վերջինների առկայությունը շատ ավելի կարևոր նշանակություն ունի այլ երկրամասերի հետ Հայաստանի առևտրական առնչությունների որոշ մանրամասներ պարզելու համար։ Այս կապակցությամբ ինքնին պերճախոս է ներկայիս Անդրկովկասի տարածքում հայտնաբերված Օգոստոս կայսրի դրամների տարածման աշխարհագրական պատկերը[6]։ Հայկական ՍՍՀ-ում այդպիսիք հայտնաբերվել են Հին Արտաշատի մերձակայքում, բուն քաղաքում, Հրազդան գետի ավազանում, Արագած լեռան արևմտյան և արևելյան փեշերով ձգվող ներկայիս մայրուղիների մի քանի հատվածներում։ Այդ վայրում դրամների հայտնաբերման մասին անցյալ դարի վերջերին հաղորդում է արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին։ Ղուլիջանի (այժմ՝ ՀՍՍՀ Արթիկի շրջանի Սպանդարյան գյուղն է) «գյուղացիները,— գրում է նա,— ինձ ցույց էին տալիս I դարի հռոմեական կայսրերի՝ առավելապես Օգոստոսի, ոչ քիչ թվով դրամներ»[7]։ Դրամներ են գտնվել նաև Շիրակի դաշտում, ինչպես և Սևանի ափերին։ Օգոստոսի դրամներից գտնվել են Վրացական ՍՍՀ-ի հարավում՝ Ախալցխայի մոտ, և ավելի հյուսիս՝ հաղորդակցության համար հեղակի նշանակություն ունեցող կետերից մեկում, Ջեստաֆոնի մոտ, որի վրայով Իբերիան կապվում էր Կոլխիդայի հետ։ Մեծ թվով դրամներ են հայտնաբերվել Կուր գետի ավազանում՝ ներկայիս Թբիլիսիից մինչև Գորի ընկած տարածքում։ Որոշ դրամներ են հայտնի նաև

---

[2] Henri Seyrig, Trésor Monétaire de Nisibe („Revue Numismatique", Paris, 1955, p. 112).

[3] Sydney p. Noe, A bibliography of Greek coin hoards (second edition) („Numismatic Notes and Monographs" (NNM) № 78, New York, 1937, № 63, 479).

[4] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. 1. Баку, 1926, № 25, Х. А. Мушегян, Монетные клады Армении, 1, Ереван, 1973, с. 54.

[5] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик, вып. 11. Баку, 1938, № 318; вып. VI, Баку, 1954, № 1548.

[6] В. В. Кропоткин, Клады римских монет на территории СССР (II в. до н. э.— V в. н. э.). («Археология СССР. Свод археологических источников», вып. Г 4—4., М., 1961). Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик..., вып. I, вып. II, вып. III, Баку, 1940; вып. IV, Баку, 1949; вып. V, Баку, 1949; вып. VI, Баку, 1954; вып. VII, Баку, 1957, вып. VIII, Баку, 1959; вып. IX, Баку 1966; M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, An Inventory of Greek Coin Hoards („The American Numismatic Society", New York, 1973).

[7] В. М. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», вып. V, М., 1896, с. 73).

Կոլխիդայից։ Դժվար չէ նկատել, որ մեր առջև ուրվագծվում է հին առևտրական մայրուղիներից մեկը։

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ անդրադառնանք Կաստորիոսի քարտեզին, որը, հետազոտողների ճնշող մասի կարծիքով, կազմված է մ. թ. IV դ.։ Քարտեզի՝ Հայաստանին ու Անդրկովկասի երկրներին վերաբերող անցուղիները ժամանակին հմտորեն քննարկել է Հ. Մանանդյանը[8]։ Համաձայն նրա հետազոտության արդյունքների՝ Արտաշատ—Սեբաստուպոլիս ուղին անցնում է ներկայիս Աշտարակ—Ապարան—Կոնդախսազ—Մարմաշեն—Փարվանա լիճ—Աբուլ—Ախալքալակ—Ախալցխա—Բորժոմ վայրերի վրայով դեպի Սուրամի լեռնանցք և Ռիոն գետի երկայնքով՝ դեպի Ֆազիս—Փոթի։ Պարզվում է, որ Օգոստոսի դրամների գյուտերի վայրերով տարված հետագիծը հիմնականում նույնական է Արտաշատ—Սեբաստուպոլիս մայրուղուն։ Դատելով դրամական հայտնաբերումներից՝ հիշյալ մայրուղու առանձին կետերում ընձյուղվում էին ավելի փոքր նշանակության ճանապարհներ՝ Թալին—Լենինական ժամանակակից մայրուղու ուղղությամբ, ինչպես և Կուր գետի միջին հոսանքի երկայնքով։ Որոշակի թվով դրամների կուտակում է նկատվում նաև Քանաքեռի ձորից մինչև Թբիլիսի ընկած այժմյան ուղու վրա։ Այս վերջին հայտնաբերումների շղթան (Քանաքեռի ձոր [հռոմ. դրամ]—Լուսակերտ [պարթև. դրամ]—Բջնի [հռոմ. դրամ]—Գետիկ—Լճաշեն [հռոմ. և ասան. դրամ.]—Իջևան [պարթև. դրամ]—Գարդաբան [պարթև. դրամ]—Թբիլիսի) որոշակիորեն նույնանում է Արտաշատ—Geluina (Լճաշենի մոտ)—Sanora (Իջևանի մոտ?)—Խրամ գետ—Թբիլիսի ուղու մի հատվածի հետ, որը ծանոթ է նույն Կաստորիոսի քարտեզից[9]։

Ադրբեջանական ՍՍՀ-ում Օգոստոսի դենարների գյուտերը կենտրոնացված են Արաքսի ափին կամ Կուրի ստորին հոսանքի մոտ։ Այսպես կոչված՝ Հյուսիսային մայրուղու ուրվագծերը նշմարվում են շատ ավելի ցայտուն, երբ քարտեզի վրա տեղադրում ենք առավելապես մ. թ. ա. I—մ. թ. I դդ. վերաբերող պարթևական այն դրամների հայտնաբերման վայրերը, որոնք ընկած են ժամանակակից Հայկական ու Վրացական ՍՍՀ-ների և Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքներում։ Այստեղից մի կարևոր հարց է ծագում. ժամանակագրական ի՞նչ շրջանակներ է ներառնում Արտաշատ—Սեբաստուպոլիս մայրուղին։

Ինչպես Գոտարզ II-ի և Տիգրան Մեծի դրամները, այնպես էլ Օգոստոսինը Հայաստանում ու Անդրկովկասում շրջանառության մեջ են եղել բավականաչափ երկար ժամանակ և, ցավոք, չեն կարող դիտվել որպես ճշգրիտ թվագրող նյութ[10]։ Ուստի, հարկ է փնտրել թվագրման այլ աղբյուրներ։ Վրացական ՍՍՀ-ի տարածքում հայտնաբերված և մ. թ. II դ. վերաբերող դրամները վերլուծելիս պարզվում է, որ հռոմեական դրամները նշված տարածքում անհավասարաչափ են տեղաբաշխված. Իբերիայում այդպիսիք գտնվում են գործնականորեն միայն Մցխեթում, իսկ ահա՝ Կոլխիդայում՝ համեմատաբար շատ են։ Ինչո՞վ է դա բացատրվում։ Նախքան այս և նախորդ հարցին պատասխանելը, վերհիշենք Հայաստանի արևմտյան սահմանների այդ նույն ժամանակների պատմական կյանքի պատկերը։

---

8 Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XII в. н. э.), изд. II, Ереван, 1954.

9 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 166—168, С. Т. Еремян, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana («Вестник древней истории» [այսուհետև՝ ВДИ], 1939, № 1, с. 79—97).

10 Х. А. Мушегян, К истории денежного обращения античной Армении («Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока», М., 1978, с. 140); Д. Г. Капанадзе, О продолжении обращения денариев Августа и драхм Готарза в древней Иберии («Советская археология [այսուհետև՝ СА], 1962, № 4, с. 59—65).

Հռոմեացիների կողմից Միհրդատ VI Եվպատորի տերության նվաճումից շատ չանցած՝ սկսվում է այդ երկրամասի ակտիվ յուրացումը։ Հաղորդակցության ճանապարհներով երբեմնի աղքատ երկիրն աստիճանաբար վեր է ածվում Արևելքում հռոմեացիների բազմաբնույթ գործունեության կարևորագույն օջախներից մեկի։ Եթե մ. թ. I դ., համաձայն Ստրաբոնի (XII, 2 (7), Կապադովկիայում հիշատակվում են հելլենիստական բնույթի երկու քաղաք՝ Մաժակը և Տիանան, ապա II դ. երկրում նկատվում է քաղաքային կյանքի աշխուժացում. նախորդ երկուսի հետ միասին առևտրի ու արդյունագործության մեջ զգալի դեր են սկսում կատարել Սատալան, Մելիտենեն, Սեբաստիան, Նեոկեսարիան և Կոմանան[11]։ Հետաքրքիր է, որ դրանք հիմնականում հիշվում են Կապադովկյան Պոնտոսում և Փոքր Հայքում (Սատալա, Մելիտենե)։ Միևնույն ժամանակ կառուցվում են հաղորդակցության նոր ուղիներ, որոնք Փոքր Հայքը կապում են Արևմուտքի, Ծոփքի ու Մեծ Հայքի հետ։ Առանձնապես նշանակալից էին Սամոսատա—Մելիտենե—Սատալա—Տրապիզոն մայրուղին, որ բացվեց Դոմիցիանոսի (81—96) օրոք, և Սատալա—Էլեգիա ճանապարհը[12]։ Վերջինով 114 թ. Արշամաշատից արագորեն դեպի հյուսիս առաջացավ Տրայանոսը (98—117) (Դիոն Կասսիուս, LXVIII, 19 (2—3)։ Ճանապարհների այս ցանցն առանձնապես բանուկ է դառնում Հադրիանոսի օրոք (117—138), երբ Տրապիզոնում կառուցվում է նավահանգիստ[13]։

Միևնույն ժամանակ աշխուժացում է նկատվում նաև հարևան Մեծ Հայքում։ Ներոնի սուբսիդիաներով վերականգնվում է Կորբուլոնի կողմից 59 թ. ավերված Արտաշատ մայրաքաղաքը (Տակիտոս, Տարեգրություններ, XIII, 41, XIV, 23; Դիոն Կասսիուս, LXII, 20 (1); LXIII, 6 (5—6)։ Փոքր-ինչ ուշ Սանատրուկը հիմնադրում է Մծուրն քաղաքը[14], իսկ նրա որդի Վաղարշը՝ Վաղարշապատ-Կայենպոլիսը։ Անշուշտ, Եփրատի երկու ափերին ծավալված քաղաքաշինական ու ճանապարհաշինական աշխատանքներն ունեին ոչ միայն ռազմաստրատեգիական, այլև տնտեսական նշանակություն։ Կաստորիոսի քարտեզում երևան է գալիս Արտաշատ—Bagauna (Բագավան)—Սատալա ճանապարհը, որով իրականացվում էր Պոնտոսի և Փոքր Հայքի հետ Մեծ Հայքի առևտուրը։ Արևմտյան հարևանների հետ ունեցած առևտրի ժամանակ Մեծ Հայքի վաճառականների գործընկերներն էին Պոնտոսի, Կապադովկիայի, ինչպես և Փոքր Հայքի հայ վաճառականները։ Վերջինիս մեկուսացված դիրքը Մեծ Հայքից, բնավ էլ չհանգեցրեց նրա բնակչության անվերադարձ հելլենականացմանը, որի մասին խոսում են աղբյուրները։ Փոքր Հայքի տարածքում հայտնաբերված մի արձանագրության մեջ հիշատակվում է ոմն արմենարքոս[15], իսկ Պրոկոպիոս Կեսարացու հաղորդման համաձայն էլ՝ «Մյուս Հայաստանը, որն ընկած է Եփրատի այս կողմում, ...կառավարում էին հինգ սատրապներ, ի ծնե հայեր. այդ պաշտոնը նրանք միշտ էլ ստանձնում էին ժառանգաբար և վարում ցմահ։ Հռոմեական կայսեր կողմից նրանք լոկ ստանում էին իրենց իշխանության խորհրդանշանները» (Պրոկոպիոս, Կառուցումների մասին, III, 1, 17)։ Որոշակի տարածքների էթնիկական կազմի հարցը, ինչպես կտեսնենք ստորև, մեր արծարծած հարցի համար ունի մեծ նշանակություն։ Եփրատի ավազանի երկու կողմերում ընկած քաղաքները առևտրի մեջ խաղում էին երկակի դեր. քանի որ, մի կողմից, նրանք Հայաստանը կապում էին կայսրության փոքրասիական ծայրագավառների հետ, իսկ մյուս

---

11 А. Б. Рановнч, Восточные провинции Римской империи в I—III вв., М.—Л., 1949, с. 122—123.

12 Էլեգիա-Իլիճան ընկած է Կարինից 20 կմ դեպի արևմուտք։

13 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 105—106։

14 Հավանաբար, Արածանու և նրա ձախ վտակ Կարասուի միախառնման տեղում։

15 R. Cagnat, Inscriptiones Graecae ad Romanas pertinentes, Paris. 1911—1927, III, 132; А. Б. Рановнч, նշվ. աշխ., с. 123—124.

կողմից՝ ապրանքներ էին փոխադրում Միջագետքից դեպի Փոքր Ասիայի արևմտյան հատվածները և Սև ծովի հարավային ափերը։

Այժմ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչի՞ հետևանք է այժմյան Վրացական ՍՍՀ-ի տարածքում մ. թ. II դ. հռոմեական դրամների անհամաչափ տեղաբաշխումը։ Դրա պատճառն, ամենայն հավանականությամբ, մի կողմից՝ Սև ծովի նավահանգիստների, և մյուս կողմից՝ Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան շրջանների ու Փոքր Հայքի միջև առևտրի աշխուժացումն էր։ Կոլխիդայում հայտնաբերված և մ. թ. II դ. վերաբերող հռոմեական դրամների գանձերը վերլուծելիս ի հայտ է գալիս մի ուշագրավ իրողություն. այդ դրամների նշանակալից մասը հատված է Կապադովկյան Կեսարիայում՝ կայսրության արևելյան կողմի գլխավոր դրամահատարաններից մեկում։ Հետաքրքրքրական է, որ Կոլխիդայում հայտնաբերվածները կենտրոնացած են գլխավորապես Սև ծովի ափին։ Այս դրամները և դրանց հայտնաբերման վայրերը, ամենայն հավանականությամբ, կապված են Սեբաստուպոլիսում, Պիտիունտում, Ֆազիսում, Ապսարում և մյուս ափամերձ կետերում հռոմեացիների կողմից հիմնադրած ռազմական ամրություններ հետ[16]։ Նկատելի է հռոմեացիների ձգտումը Սև ծովը գոտեվորել իրենց ամրոցներով, որի շնորհիվ էլ, պետք է ենթադրել, ակտիվացան Կոլխիդայի կապերը Սև ծովի հարավային ափերի հետ, ու նույն այդ պատճառով էլ թուլացան առևտրական կապերը, մասնավորապես, Իբերիայի և Կոլխիդայի միջև։ Ահա՛ թե ինչի հետևանք է հայտնաբերված դրամների քանակական նմանօրինակ անհամաչափ տեղաբաշխումը Իբերիայում և Կոլխիդայում։

Այս իրողությունը պետք է դիտարկել նաև հետևյալ տեսանկյունից։ Ներոնի դրամական ռեֆորմից հետո դրամի մեջ արծաթի տեսակարար կշիռը պակասեց, որը պատճառ դարձավ առևտրական ուժեղ դիմադրությանը ո՛չ միայն կայսրության տարածքում, այլև նրա սահմաններից դուրս։ Այս առումով, մասնավորապես, հետաքրքիր են Անդրկովկասում հայտնաբերված նյութերը։ Ռեֆորմից հետո, այսինքն՝ Ներոնից մինչև մ. թ. II դ. սկիզբը հատված դրամներից Անդրկովկասի հյուսիսում հայտնաբերվել են Կոլխիդայի ափերին կամ էլ Մցխեթում։ Ավելի ճշգրիտ լինելու դեպքում պիտի ասենք, որ մ. թ. II դ. սկզբի դրամները հայտնաբերվում են կամ Կոլխիդայի ափերին, կամ էլ Մցխեթի թաղումներից։ Այլ խոսքով ասած՝ դրանց համախմբվածությունը նշված կետերում ըստ մեծի մասին չպիտի կապել առևտրի հետ։

Հյուսիսային սահմաններից կրկին վերադառնանք Հայաստանի արևմտյան և հարավային գավառներ։ Այստեղ հայտնաբերված նյութերից մեծ ուշադրության է արժանի Դիարբեքիրում գտնված և հիմնականում սելևկյան դրամներից բաղկացած գանձերից մեկը (1955—I)։ Մ. թ. ա. III դ. վերջին քառորդով թվագրվող այս գանձի բաղադրամասերի աշխարհագրությունը բավական ընդարձակ է։ Դրամները խմբավորվում են երեք երկրամասերի շուրջ. Հոնիա, Արևելյան Միջերկրածով, Միջագետք[17]։ Ժամանակագրական ու աշխարհագրական տեսանկյուններից առավել կարևոր է Դիարբեքիր—II գանձը, որը հայտնաբերված է 1955 թ. (1955—II)։ Մոտ մ. թ. ա. 30 թ. թվագրվող այս գանձում, ի տարբերություն մ. թ. ա. III դ. գանձի, սելևկյան և կապադովկյան դրամների հետ միասին առկա են թվով 80 պարթևական դրամներ[18]։ Էլ ավելի հարուստ է մ. թ. ա. 31 թ.-ից հետո թաղված՝ Մծբինի դրա-

---

[16] В. А. Левкинадзе, Оборонительные сооружения Себастополиса (СА, 1968, № 1, с. 206).

[17] Henri Seyrig, Trésors du Levant Anciens et Nouveaux, Paris, 1973, p. 24; M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, An Inventory of Greek Coin Hoards. („The American Numismatic Society", New York, 1973, № 1735).

[18] Henri Seyrig, Trésors du Levant..., p. 109; M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, Նշվ. աշխ., № 1744.

մական գանձը[19], ուր առկա են Սիրիայի, Միջագետքի, Հայաստանի, Փոքր Ասիայի, Կոմմագենեի ու Պաղեստինի փողերանոցներում հատված բազում դրամներ։ Դիարբեքիրի ու Մծբինի գրամական գանձերի բազմաքանակությունը վկայում է սույն գոտու անտեսական կարևորությունը։ Տիգրանակերտը, Ամիդը և Հայաստանի ու Միջագետքի սահմաններով անցնող՝ վերին աստիճանի կարևոր Մծբին—Եդեսիա մայրուղու վրա ընկած քաղաքներն այն օղակներն էին, որ ապահովում էին Միջագետքի կապը Փոքր Ասիայի հետ՝ եփրատյան երեք անցումների վրայով։ Հայաստանի ու Հյուսիսային Միջագետքի համաժամանակյա գանձերն ունեն զուգահեռներ։ Եթե վերջինները համադրենք Մծբինի, Սառնակունքի[20] և Խինիսլիի[21] գանձերի հետ, ապա երևան կգան միևնույն երկրներն ու փողերանոցները, իսկ Մծբինի և Սառնակունքի գանձերում կան Արտաշատում ու Տիգրանակերտում՝ Տիգրան II-ի արքայական ուղու երկու ելակետային քաղաքներում հատված դրամներ։

Վերջին տասնամյակներին Արածանիի գետաբերանի մոտ կառուցվող Քեբանի ջրամբարակի շինարարական աշխատանքների ժամանակ բացվել է մ. թ. առաջին դարերին վերաբերող ամրոցների մի համակարգ, մեկը՝ Եփրատի ձախ, իսկ երեքը՝ աջ ափին[22]։ Դրանցից ոչ հեռու՝ Արածանիի և Եփրատի ձախ ափերի միջակայքում, պեղվում են Արշամաշատ-Շամշատ[23] և Աշվան[24] հնավայրերը։ Նեկրոպոլներ ունեցող և չորս ամրոցների հարևանությամբ գտնվող արևելահռոմեական ներմուծված ապրանքներով հարուստ երկու բնակավայրերի առկայությունը վկայում է այս տարածքում տեղի ունեցած ուժեղ շփումների մասին։ Աշվանում հայտնաբերված դրամական գանձը[25] հարկ է համեմատել վերը հիշված Դիարբեքիր 1955—II գանձի հետ։ Վերջինիս մեջ, անտիոքյան և պարթևական դրամների կողքին, կան Արիոբարզան Առաջինի 8 դրահմաներ։ Այս արքայի դրամները քիչ չեն հանդիպում նաև Հայաստանում[26], և դա վկայում է Կապադովկիայի հետ Հայաստանի կապերի մասին, իսկ դրանց առկայությունը Հայաստանի հարավում (8) և արևմուտքում (47) վկայում է հօգուտ Մելիտենե—Տիգրանակերտ ուղիով կատարված առևտրի։ Սրա օգտին է խոսում նաև Կաստորիոսի քարտեզը[27], ուր (XI

---

[19] Henri Seyrig, Trésor Monétaire de Nisibe. („Revue Numismatique", Paris, 1955, p. 112); M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, *նշվ. աշխ.*, № 1788.

[20] Հ. Ա. Մուշեղյան, Монетные клады Армении, I, Ереван, 1973.

[21] Е. А. Пахомов, *նշվ. աշխ.*, вып. IX, № 2080.

[22] „Keban Project 1969 Activities". („Middle East Technical University Keban Project Publications", Series I, № 2, Ancara, 1971); „Keban Project 1970 Activities".— *Նշված. հրատ.*, № 3, Ancara, 1972); Г. А. Тирацян, Новые археологические материалы послеурартского времени на территории Западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры («Древний Восток», 2, Ереван, 1976, с. 135—136).

[23] B. Ögün, Haraba Excavations, 1969 („Keban Project 1969 Activities", *Նշված հրատ.*, p. 43—46, pl. 39 (1—2)).

[24] D. French, Aşvan Excavations, 1969 („Keban Project 1969 Activities,—*Նշված հրատ.*, p. 35—37, pl. 29—33); „Keban Project 1970 Activities", *Նշված հրատ.*, p. 67.

[25] *Այստեղ գտնված 48 դրամներից 47-ը պատկանում է Արիոբարզան I-ին (95—62), իսկ մեկը՝ Արիարաթ IX-ին* (42—36): Anthony McNicoll, The Aşvan Hoard: Coins of Two Cappadocian Monarchs („Anatolian Studies", 1973, vol. XXXIII, p. 181—186, pict. 2—3); M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, *նշվ. աշխ.*, № 1741.

[26] Հ. Ա. Մուշեղյան, О распространении эллинистических монет в Армении.—«Էյրենե», т. I, с. 192.

[27] Konrad Miller, Die Weltkarte des Castorius, Ravensburg, 1888.

սեգմենտ, 3—4) Տիգրանակերտից դուրս եկող ճանապարհներից մեկը կապվում է ելակետային դիրք ունեցող Bagauna (Բագավան)-ի հետ, իսկ մյուսն, ընդհակառակը, ձգվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ հասնելով մինչև Եփրատի ափը։

Հարկ է նշել ևս մի գանձի մասին, որ վերաբերում է մ. թ. ա. 60—55 թթ. և գտնվել է Հայաստանի հարավում՝ Կորդուքում. դա Մարդինի գանձն է[28]։ Այն մի կողմից ընդհանրություններ ունի Դիարբեքիրի (պարթևական դրամներ) և մյուս կողմից՝ Մծբինի (սելևկյան դրամներ) գանձերի հետ։ Անշուշտ, Մծբին—Եդեսիա մայրուղու հետ Հայաստանի հարավի կապերին նպաստում էր Ադիաբենեի և Օսրոենեի հայ (Ստրաբոն, XVI, 1 (19), իսկ Հայաստանում սիրիացի, հույն, հրեա բնակչության առկայությունը։ Ոչ նվազ կարևոր հանգամանք է և այն, որ քրիստոնեության առաջին ալիքը ողողեց Հայաստանի տարածքի մի մասը հենց հարավից նույն այն ճանապարհներով, որոնցով զարգանում էին առևտրական կապերը և ժամանակագրական առումով անմիջապես հաջորդեց նշված պահին[29]։

Միջագետքում հայտնաբերված հռոմեական դրամների գանձերը թույլ են տալիս հետևելու Միջագետքի առևտրի ծավալմանը Փոքր Ասիայի ու Հայաստանի հետ։ Դերաղանցապես մ. թ. III դ. թվագրվող Դուրա-Եվրոպոսի 16 դրամական գանձերում ավելի հաճախ, քան մյուսներում՝ հանդիպում ենք, մի կողմից, հյուսիսային Միջագետքի Խառան, Եդեսիա, Ռեսաինա, Մծբին և Սինգարա (Սինջար), իսկ մյուս կողմից՝ Փոքր Ասիայի Կոմանա, Ամասիա և Զելե քաղաքներում հատված դրամների[30]։ Հյուսիսային Միջագետքի հիշյալ քաղաքներն ու հարավային Հայաստանի կենտրոնները նշանակալից դեր էին խաղում Սիրիայի, հարավային Միջագետքի ու Իրանի առևտրական կապերում՝ Փոքր Ասիայի հետ։ Միջագետքի ու Փոքր Ասիայի միջև կարևոր դիրք էր գրավում Մելիտենեն։ Առանձնապես մեծ էր նրա նշանակությունը Փոքր Ասիայի հյուսիսային և հարավային շրջանների հետ կապերն ամրապնդելու գործում, մինչդեռ Եփրատի մյուս երկու անցումները՝ Զեգման ու Սամոսատան, ավելի կարևոր էին Միջագետքը Փոքր Ասիայի հարավային շրջանների հետ կապելու համար։ Իսկ թե Մելիտենեն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ հռոմեական ճամբարից ինչպե՞ս վերաճեց քաղաքի, այդ մասին պատմում է Պրոկոպիոս Կեսարացին. «Հնում Փոքր Հայք կոչված [երկրում], Եփրատ գետից ոչ շատ հեռու, գտնվում էր մի վայր, ուր հաստատվել էր հռոմեական զորագունդը։ Վայրը կոչվում էր Մելիտենե, իսկ զորագունդը՝ լեգեոն։ Հռոմեացիները հնում այստեղ ցածրադիր վայրում կառուցել էին քառակուսի ամրություն, որը զինվորների համար բավականաչափ զորանոցներ ուներ... Այնուհետև հռոմեացիների կայսր Տրայանոսի որոշմամբ վայրը ստացավ քաղաքի իրավունք և դարձավ շրջանի մայրաքաղաք։ Ժամանակի ընթացքում Մելիտենե քաղաքը մեծացավ և մարդաշատ դարձավ, և երբ ամրություններից ներս այլևս տեղ չմնաց բնակվելու [...տարածությունը շատ փոքր էր], հաստատվեցին [քաղաքի] շրջակայքում, ուր և եկեղեցիներ, վարչական շենքեր,

---

[28] M. Thompson, O. Morkholm, C. M. Kraay, նշվ. աշխ., № 1784; Henri Seyrig, Trésors du Levant Anciens et Nouveaux, Paris, 1973, p. 105—106;

[29] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана (II изд.), Ереван, 1971, с. 345—347; «Հայոց եկեղեցվո պատմություն», մասն Ա, երկասիրություն Կարապետ Ե. Վարդապետի, Վաղարշապատ, 1908, էջ 33—34։

[30] Sydney P. Noe. A Bibliography of Greek coin hoards (second edition).—Numismatic Notes and Monographs (=NNM), № 78, New York, 1937, № 343—355; Alfred R. Bellinger, Two Roman Hoards from Dura-Europos.—(NNM, № 49, 1931; Alfred R. Bellinger, The Third and Fourth Dura Hoards (NNM, № 55, 1932); Edward T. Newell, The Fifth Dura Hoard (NNM, № 58, 1933); Alfred R. Bellinger. The Sixth, Seventh and Tenth Dura Hoards (—NNM, № 69, 1935); Alfred R. Bellinger, The Eighth and Ninth Dura Hoards (NNM, № 85, 1939).

հրապարակ, խանութներ կառուցեցին, [նաև] սյունաշարքեր, բաղնիքներ, թատրոններ, [անցկացրին] քաղաքային փողոցներ և ինչ որ անհրաժեշտ է մի մեծ քաղաք դարդարելու համար։ Բայց դրա հետևանքով Մելիտենեի մեծ մասը քաղաքի սահմաններից դուրս եկավ...»[31]։

Հայաստանի սահմանային քաղաքներն ու ստրատեգիական կարևոր կետերը, ինչպես արևմուտքում (Սատալա, Մելիտենե), այնպես էլ հարավում դառնում են արհեստի ու առևտրի նշանակալից կենտրոններ։ Դրանց նշանակությունը հատկապես մեծանում է մ. թ. II—III դդ., երբ կայսրության սահմանները, շատ թե քիչ, կայունանում են, և սահմանային խոշոր քաղաքները վերածվում են Արևելքն Արևմուտքի հետ տնտեսապես կապող յուրահատուկ միջանցքների։ Այդ պատճառով՝ գնալով ուժեղանում է պայքարը ստրատեգիապես կարևոր կետերի և միաժամանակ, տնտեսական խոշոր կենտրոնների համար՝ ինչպես Հռոմի ու Իրանի, այնպես էլ բուֆերային պետությունների միջև։

Ըստ երևույթին, այս իրողությունը կարելի է կապել մի երևույթի հետ, որ մասնավորապես ցցուն է երևում Անդրկովկասի տարածքում։ Ելնելով հռոմեական ու պարթևական դրամների հայտնաբերման քարտեզի տվյալներից, դժվար չէ նկատել դրանց աշխարհագրական տեղաբաշխման հետևյալ պատկերը. Կոլխիդայում պարթևական դրամներ գրեթե չկան, իսկ Կոլխիդայից դեպի Իբերիա տանող ուղու վրա՝ Զեստաֆոնի շրջանում, հռոմեական դրամների հայտնաբերումներն ավելի շատ են, քան պարթևականներինը։ Իբերիայում նկատվում է հռոմեական դրամների համախմբման երեք կետ, և, համեմատաբար, ավելի շատ են պարթևական դրամները. Մցխեթում մոտավորապես հավասար հարաբերակցություն գոյություն ունի Օգոստոսի և Գոտարզ II-ի դրամների միջև[32]։ Աղվանքում անվիճելիորեն գերիշխում են պարթևական դրամները[33]։ Վերջապես՝ Հայաստանում հետևյալ պատկերն ենք տեսնում. ծայր արևելքում՝ Կուրի և Արաքսի միախառնման շրջանին մոտ, գերակշռում են պարթևական դրամները։ Որքան մոտենում ենք Արտաշատ—Սեբաստուպոլիս մայրուղուն, այնքան ավելանում է տարբեր դրամների համախմբումը. այստեղ նկատվում է հռոմեական ու պարթևական դրամների հավասարաչափ տեղաբաշխում[34]։ Պարզվում է, որ բուֆերային պետությունների տարածքում առկա է եղել ոչ միայն քաղաքական, այլև առևտրական մրցակցություն ինչպես Հռոմի և պարթևների, այնպես էլ բուն բուֆերային երկրների միջև։ Օրինակ՝ նման մրցակցություն է նկատվում Արևելյան Հայաստանի և Իբերիայի միջև, որի դրսևորումը Իբերիայի փորձերն էին՝ ձեռք գցելու Կուրից հարավ ընկած բանուկ առևտրական ուղիները. նման մրցակցության մեջ երբեմն գործիք էին դառնում քոչվորները, որի արտահայտությունն են ալանների արշավանքները դեպի Մարաստան ու Հայաստան (մ. թ. 75 թ.) և Պարթևաց երկիրը (մ. թ. 134 թ.)։

Հռոմեական դարաշրջանում ոչ պակաս ակտիվ էր նաև քաղաքական ու տնտեսական մրցակցությունը բուն երկրների ներսում և կամ առանձին շրջանների միջև, որոնց դրսևորման ձևը արտոնյալ դասերի ներկայացուցիչնե-

---

31 Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի («Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Երևան, 1967, էջ 195)։

32 Հաշվարկը կատարել ենք հռոմեական դրամների՝ վերն արդեն բազմիցս հիշատակված կատալոգների և պարթևական դրամների հետևյալ ժողովածուի հիման վրա. Т. Я. Абрамишвили, Каталог парфянских монет государственного музея Грузии, Тбилиси, 1974 (Резюме на русском языке).

33 Е. А. Пахомов. նշվ. աշխ., вып. I—IX, Баку, 1926—1966.

34 В. В. Кропоткин, նշվ. աշխ., №№ 1541—1564; Е. А. Пахомов, նշվ. աշխ., вып. III—VI, VIII.

րի խմբավորումներն էին[35]։ Դրա խոսուն օրինակն այն հարաբերություններն էին, որոնք գոյություն ունեին մի կողմից՝ Ծոփքի և Փոքր Հայքի, մյուս կողմից՝ Մեծ Հայքի միջև, ինչպես նաև՝ բուն Իրանի և նրա Միջագետքյան տիրույթների միջև[36]։ Նույն իրավիճակը ցցուն կերպով նկատվում է ոչ միայն բուֆերային ու անկախ երկրների գավառներում՝ ընդհանրապես, այլև ստրատեգիական որոշակի և կարևոր կետերում։ Սահմանային քաղաքները, առավել ևս նրանք, որոնք գտնվում էին համեմատաբար անկախ պետությունների տարածքում, պարարտ հող էին տարբեր, առավել ևս ախոյան, երկրների վաճառականների համար։ Դրա հետևանքով էլ, օրինակ, Հայաստանում կամ Իբերիայում երկար ժամանակ շրջանառության մեջ էին սելևկյան, պարթևական, հռոմեական, հայկական դրամները, որոնք միաժամանակ լավագույնս բավարարում էին այս երկրների ներքին, մի որոշ չափով՝ ինտերնացիոնալ, շուկայի պահանջները։

Հուստինիանոսի 408—409 թթ. էդիկտից տեղեկանում ենք, որ ըստ Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև գոյություն ունեցող համաձայնության՝ միջազգային առևտուրն ընթանում էր նախօրոք որոշված երեք կետերում. Պարսից տարածքում՝ Մծբինում, կայսերական տարածքում՝ Կալլինիկումում (Եփրատի վրա) և հայկական տարածքում՝ Արտաշատում։ Երեք քաղաքներում էլ կային մաքսատներ (Cod. Justin., IV, 63 (4); IV, 63 (6)։ Սահմանային այս խոշոր կենտրոններում էլ համախմբվում էր ապրանքների մեծ մասը, որը պետության եկամուտի կարևոր աղբյուրներից էր։ Օրինակ՝ 572 թ., համաձայն պատմիչ Գրիգոր Տուրացու, աբստամբ հայերը «ներկայացան կայսրին հսկայական թվով մետաքսով և խնդրում էին նրա հովանավորությունը...»[37]։

Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ տերությունները մշտապես ձգտում էին տիրանալու այս խոշոր կենտրոններին կամ էլ՝ զանազան եղանակներով նրանց թեքել իրենց կողմը։ Հաջորդ քայլը կոնկրետ ապրանքների, օրինակ, երկաթի մենաշնորհացումն էր, թեև այս միտումներն արդեն կային անտիկ շրջանում, սակայն իրենց իրավական ձևակերպումը ստանում են փոքր-ինչ ուշ։

Այսպիսով՝ գրավոր աղբյուրների և, առանձնապես, Հայաստանի ու հարևան երկրների տարածքում հայտնաբերված դրամական գանձերի քննության հիման վրա կարելի է գալ հետևյալ եզրակացության. Անդրկովկասում հռոմեական, հիմնականում Օգոստոսի, դրամների տեղաբաշխման քարտեզը կողմնորոշված է դեպի Արտաշատ—Սեբաստուպոլիս հին առևտրական մայրուղին։ Միևնույն ժամանակ նույն երկրամասերում հռոմեական ու պարթևական դրամների տեղաբաշխման քարտեզը վկայում է ոչ միայն քաղաքական, այլև առևտրական մրցակցության մասին՝ Անդրկովկասում պարթևների և Հռոմի միջև։ Մեծ ու Փոքր Հայքերում աշխույժ քաղաքաշինության ծավալումը, Հայաստանի և հարևան երկրների տարածքի տարբեր կետերում հռոմեական ներմուծված ապրանքների հայտնաբերումը, նույն երկրներում (Հայաստան, Միջագետք, Անդրկովկաս) հայտնաբերված հռոմեական դրամների գանձերը, խառը բնակչությամբ սահմանային գոտիների առկայությունը, Հայաստանի և հարևան երկրների տարածքով ձգվող ուղիների լայն ցանցը վկայում են, որ մ. թ. I դ. զգալիորեն աճում է Հայաստանի դերը միջազգային տարանցիկ առևտրի մեջ՝ առավել նշանակալից դառնալով արդեն մ. թ. II—III դարերում։

---

[35] Tacit., Ann., XIII, 34; XIV, 24; XIV, 26; О. В. Кудрявцев, Римская политика в Армении и Парфии в первой половине правления Нерона. (ВДИ, 1948, № 3).

[36] Г. А. Кошеленко, Внутриполитическая борьба в Парфии (ВДИ, 1963, № 3, с. 62—63); Gennadii Košelenko, La politique commerciale des Arsacides et les villes Grecques („Estratto da Studi in Onore di Edoardo Volterra", I, Milano, 1971).

[37] Ernst Stein, Studien zur Geschichte des bysantinischen Reiche, Stuttgart, 1919, S. 42; Я. А. Манандян, О торговле и городах Армении, с. 110.

ТОРГОВЫЕ СНОШЕНИЯ АРМЕНИИ С СОСЕДНИМИ СТРАНАМИ (I—III ВВ.)

АИК АКОПЯН

Резюме

Карта распределения римских монет, в основном Августа, на территории Закавказья ориентирована на древний торговый путь Арташат—Себастополис. В то же время карта распределения римских и парфянских монет в этом ареале свидетельствует не только о политической, но и коммерческой конкуренции в Закавказье между Парфией и Римом.

Оживленная градостроительная политика на правом и левом берегах Евфрата—в Великой Армении, Софене и Малой Армении, анализ монетных кладов римского происхождения, обнаруженных в Армении, Месопотамии и Закавказье, а также письменные сообщения о наличии оживленных торговых трасс, тянувшихся по всей территории Армении и соседних с ней стран (Экбатана—Арташат—Себастополис; Арташат—Багаван—Сатала; Багаван—Тигранакерт; Тигранакерт—Мелитена—Себастия—Анкира; Тигранакерт—Нисибис; Нисибис—Эдесса), свидетельствуют о том, что роль Армении в международной сухопутной торговле весьма возрастает с середины I в. н. э. до начала III в. Города, граничащие с Римом и Парфией, в силу своего географического положения и сложившейся политической ситуации превращаются в крупные экономические центры, а территории буферных государств по тем же причинам становятся удобным каналом торговых сношений между народами Запада и Востока.